ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 մայիսի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

71
(2737)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՀԱՐՑԸ ՀԵՏԱՁԳՎԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ վարչության վերջին նիստի օրակարգում եղել է երկու հարց: ՔՊ-ամերձ մեր աղբյուրների փոխանցմամբ՝ առաջին հարցը եղել է ՀԱՊԿ-ի թեման, իսկ երկրորդ հարցը՝ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանին պաշտոնից հեռացնելու մասով նախագծի քննարկումը: ՀԱՊԿ-ից դուրս գալ-չգալու մասով Փաշինյանը թիմակիցներին հրահանգել է այլեւս փակել թեման, հանել այդ հարցն օրակարգից, որեւէ հայտարարություն չանել ՀԱՊԿ-ից դուրս գալու մասով՝ պատճառաբանելով, որ, ճիշտ է, ՀԱՊԿ-ը չի կատարում իր պարտականությունները, բայց այդ կազմից դուրս գալը շատ թանկ գին կնստի ՀՀ-ի վրա: Ինչ վերաբերում է Թագուհի Թովմասյանին պաշտոնից զրկելուն, ապա տեղեկացանք, որ վարչության անդամներից մի քանիսն ասել են, որ հիմնազուրկ է Թովմասյանին պաշտոնանկ անելու նախագիծը: «Չենք կարող պաշտոնից հեռացնել հանձնաժողովի նախագահին՝ նիստի անդամների խոսքը չսահմանափակելու հիմքով: Թույլ հիմքեր են ներկայացվում. խայտառակ կլինենք»,- ներկաներից մեկը մոտավորապես այսպես է արտահայտվել: Հնչել է նաեւ տեսակետ, որ այս փուլում դա ամենակարեւոր հարցը չէ, որով պետք է իշխանությունը զբաղվի: Ի վերջո, որոշվել է Թովմասյանի պաշտոնանկության հարցը այդ պահի դրությամբ հանել օրակարգից, համենայնդեպս, երեքշաբթի մեկնարկող ԱԺ նստաշրջանում չի լինի այդ հարցը: ՔՊ-ական մեր աղբյուրները փոխանցեցին նաեւ, որ ԱԺ միակ ընդդիմադիր պաշտոնյային հեռացնելու հարցն օրակարգից չի հանվել. պայմանավորվել են Թովմասյանի հարցին անդրադառնալ՝ հունիսի վերջին քառօրյային ընդառաջ: Այսինքն՝ հարցը վերջնականապես փակ չէ, ՔՊ-ն այն թողել է օդում կախված:

Ինչպես արդեն հայտնել ենք, ԱԺ-ում երեկ տեղի է ունեցել Նիկոլ Փաշինյանի եւ ՔՊ-ականների դռնփակ հանդիպումը, որը տեւել է երկու ժամից ավելի: «Ժողովուրդ» օրաթերթին բացառիկ մանրամասներ են հայտնի դարձել Փաշինյանի եւ ՔՊ-ականների փակ հանդիպումից: Նախ տեղեկացանք, որ ՔՊ-ականների համար անակնկալ է եղել Փաշինյանի՝ ԱԺ գալը. վերջին պահին են իմացել, որ վարչապետի հետ հանդիպում է նախատեսված, եւ շտապել են ԱԺ: Հանդիպմանը, բացի պատգամավորներից, ներկա են եղել նաեւ դեռեւս ԱԻ նախարար Արմեն Փամբուխչյանը, ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը: ՔՊ-ականները ոչ ամբողջ կազմով են ներկա եղել վարչապետի հետ հանդիպմանը, քանի որ մի մասը գործուղումների են: Հանդիպման հիմնական օրակարգը եղել է կիրակի օրը Բրյուսելում տեղի ունեցած Փաշինյան-Ալիեւ-Միշել հանդիպումը եւ մյուս շաբաթ մեկնարկելիք ԱԺ քառօրյան: Փաշինյանը նախ ներկայացրել է բրյուսելյան հանդիպման մանրամասները, ամփոփել է արդյունքները, իսկ ՔՊ-ականները հիմնականում լսողի դերում են եղել, միայն նրանցից մի քանիսն են հարցեր ուղղել Փաշինյանին: Թեեւ Փաշինյանն ասել է, որ մի շարք կարեւոր հարցերի շուրջ չի հաջողվում Ադրբեջանի հետ համաձայնության գալ, բայց, ընդհանուր առմամբ, Փաշինյանը եւ ՔՊ-ականները դրական են գնահատել Բրյուսելում հանդիպումը: Առաջիկայում Մոսկվայում եւ Քիշնեւում սպասվող հանդիպումներին Փաշինյանը չի անդրադարձել: Նիստի վերջում քննարկվել են ներքաղաքական, կուսակցության գործունեությանը եւ քառօրյային առնչվող ընթացիկ հարցեր:

ՀՀ նախագահի լիազորությունների իրականացման համար ՀՀ պետական բյուջեից տրամադրվում են մեծ գումարներ, սակայն Վահագն Խաչատուրյանի աշխատանքի արդյունավետությունն այդպես էլ չի երեւում: Խոսենք թվերով. 2022 թվականին նախագահի լիազորությունների իրականացման համար ծախսվել է 1.2 մլրդ դրամ, ընդ որում՝ կատարողականը 92 տոկոս է եղել, այսինքն՝ նախագահը սիրով ծախսել է իր կառույցին բաժին հասած գումարը, մեկնել գործուղումների, հյուրասիրություններ կազմակերպել: Ինչպես հայտնի է, 2022 թվականի մարտի 3-ին 71 կողմ ձայներով Վահագն Խաչատուրյանն ընտրվեց Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնում: Այս ընթացքում դժվար է մատների վրա հաշվել, թե ինչ հանրօգուտ աշխատանք է կատարել Վահագն Խաչատուրյանը: Միակ բանը, որով թերեւս կարող ենք հիշել Վահագն Խաչատուրյանի պաշտոնավարման մեկ տարին, սկանդալն էր, որում նա հայտնվեց նախորդ տարվա սեպտեմբերին: Խոսքը դրվագի մասին է, երբ Խաչատուրյանը Մեծ Բրիտանիայի թագուհի Եղիսաբեթ Երկրորդի դագաղի մոտ լուսանկարվել էր՝ մի վայրում, որտեղ լուսանկարվելն արգելված է: Ամբողջ մայիս ամսվա նրա գործունեությունը սահմանափակվել է միայն շնորհավորական ուղերձներ հղելով, օրինակ՝ մայիսի 3-ին, 5-ին, 17-ին: Ապրիլ ամսվա ընթացքում եւս շնորհավորական խոսքերը բազմաթիվ են եղել, օրինակ՝ ապրիլի 17-ին, 24-ին, 25-ին: Նա ապրիլին եղել է նաեւ Դիլիջանում, մեկնել արտերկիր, Մատենադարանում միջոցառման մասնակցել: Թե ինչ օգուտ են տվել այս այցերն ու ընդունելությունները Հայաստանին, դժվար է ասել, բայց որ սուղ բյուջեից 3 մլն 200 հազար ԱՄՆ դոլար է ծախսվել ըստ էության ոչինչ չանելու համար, փաստ է:

ՀՀ արդարադատության նախարարությունը բավականին ակտիվ է մեկ անձից կատարվող գնումների հարցում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 4 մլն 117 հազար դրամ ընդհանուր արժողության պայմանագիր է կնքված եղել՝ ապրիլի 18-20 «Հոլիդեյ ինն» հյուրանոցում ճաշի եւ սուրճի հյուրասիրության համար: Մեկ այլ պայմանագրով՝ 138 հազար դրամ է տրամադրվել պատվիրակության անդամների՝ օդանավակայանից դեպի հյուրանոց եւ հակառակ ուղղություններով: Եւս 56 հազար դրամ է ծախսվել նախարարության կողմից 8 շարֆ գնելու համար: 362 հազար էլ տրամադրվել է պաշտոնական ճաշի մատուցման համար: Այսինքն՝ ստացվում է՝ նախարարությունը բավականին ակտիվ է հյուրեր ընդունելու ու ճանապարհելու հարցում. մնում է՝ այդպես արագ եւ արդյունավետ կարողանա աշխատանքները կազմակերպել:

ԲԱՂՁԱԼԻ ՏԱՐԱԾՔ

ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ԱԴԱՊՏԱՑՆՈՒՄ ԵՆ

Մայիսի 14-ին Բրյուսելում տեղի էր ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի եւ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հանդիպումը: Եռակողմ հանդիպումից հետո Շառլ Միշելը հայտարարեց, որ հաջորդ քայլը լինելու է դելիմիտացիան Ալմա-Աթայի հռչակագրով, որը ենթադրում է Հայաստանի տարածքային ամբողջականության ճանաչում՝ 29,8 հազար քառակուսի կիլոմետրում, եւ Ադրբեջանինը՝ 86,6 հազար քառակուսի կիլոմետրի: «Ժողովուրդ» օրաթերթը բրյուսելյան հանդիպման եւ Շառլ Միշելի հանդիպման վերաբերյալ զրուցել է քաղաքագիտաբան Վիգեն Հակոբյանի հետ:

-Պարոն Հակոբյան, ի՞նչ է ենթադրում Միշելի հայտարարությունը: Կարո՞ղ ենք արձանագրել, որ Բրյուսելում Հայաստանը համաձայնել է ճանաչել Արցախը՝ որպես Ադրբեջանի մաս:

-Ընդհանուր առմամբ, ինձ համար ոչ մի լուրջ անակնկալ չկար բրյուսելյան հանդիպումից, Շառլ Միշելի հայտարարության մեջ եւս նոր բան չկար: Կարծում եմ՝ վերջին շրջանում Հայաստանի իշխանությունները Ադրբեջանի հետ բանակցային գործընթացը, մասնավորապես՝ Արցախի շուրջ, վարում են մոտավորապես «Արցախը՝ Հայաստանի դիմաց» բանաձեւով: Ժամանակ կար, որ ասում էին՝ «տարածքներ՝ կարգավիճակի դիմաց», նմանատիպ կարճ ֆորմուլաներ էին առաջ բերում՝ «խաղաղություն՝ տարածքների դիմաց»: Այժմ, իմ կարծիքով, պարզ բանաձեւ է դրված սեղանին. Փաշինյանն ասում է, որ Արցախը մենք տալիս ենք, բայց դրա դիմաց Ադրբեջանը պետք է ճանաչի Խորհրդային Հայաստանի 29.800 քառակուսի կիլոմետր տարածքը: Այս տրամաբանությունից ելնելով՝ Բրյուսելում, ըստ էության, ասվել է, որ ես ճանաչում եմ քո ամբողջ տարածքը՝ Ալմա-Աթայի հռչակագրով: Ադրբեջանի տարածքը հաշվարկել են Արցախը ներառյալ 86.600 քառակուսի կիլոմետր: Այսինքն՝ երբ հայտարարում են, որ Հայաստանը ճանաչում է 86. 600 քառակուսի կիլոմետր տարածքը, դա նշանակում է, որ Արցախը մեխանիկորեն Ադրբեջանի մեջ են ներառում, իսկ Ալիեւն էլ հայտարարել է, որ ճանաչում է Հայաստանի 29. 800 քառակուսի կիլոմետր, այսինքն այն բաղձալի տարածքը, որը, ըստ Նիկոլ Փաշինյանի, կարմիր գիծն է:

-Պարոն Հակոբյան, այսինքն՝ ըստ Ձեզ՝ բրյուսելյան հանդիպմանը որեւէ նոր պայմանավորվածություն ձեռք չի բերվել, այլ քննարկվել է այն, ինչի մասին մինչ այս խոսել է Փաշինյանը, որ Հայաստանը ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը:

-Այս առումով նորությունը այն էր, որ հանրային տիրույթում հայտնվեց թիվ՝ 86 .600 քառակուսի կիլոմետր-ն, բայց չեմ կարծում, որ դա հանդիպմանը առաջին անգամ է քննարկվել բանակցային գործընթացում: Իմ կարծիքով՝ այդ ամենը նախկինում էլ է քննարկվել: Երբ Փաշինյանը օրումեջ հայտարարում է, թե ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, բնականաբար հարց է առաջանում՝ ո՞րն է այդ տարածքը, այսինքն՝ այդ հարցը մշտապես քննարկվել է: Հիմա հանրությանը ադապտացնում են այն մտքին, որ այլեւս Արցախը Հայաստանի անվտանգային ճարտարապետության հետաքրքրությունների մեջ չէ, աստիճանաբար սովորեցնում են, որ Արցախը հանձնվում է Ադրբեջանին: Պաշտոնապես չեն ասում, որ հանձնում են, այլ ասում են, որ, ըստ քննարկվող փաստաթղթի, Արցախը ճանաչում են՝ որպես Ադրբեջանի տարածքային ամբողջականություն:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՔՆՆԱԴԱՏԵԼ Է

ԽԱՉԱՏՐՅԱՆԸ ՇԱՆՏԱԺ Է ԱՆՈՒՄ ԼԱՎՐՈՎԻՆ

ԱԺ ՔՊ իշխող խմբակցության պատգամավոր Վիգեն Խաչատրյանը երեկ՝ խորհրդարանում ճեղազրույցի ժամանակ, քննադատել է ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովին, ու սա՝ այն դեպքում, երբ Մոսկվայում ԱԳ նախարարների հանդիպում է նախատեսված: Այսինքն՝ ստացվում է, որ իշխանության ներկայացուցիչներն անգամ դիվանագիտական էթիկա պահել չգիտեն ու միայն խոսում են շանտաժի լեզվով:

Հիշեցնենք, որ Վիգեն Խաչատրյանը խորհրդարանում հայտարարել էր. «Ի տարբերություն Արեւմուտքի՝ Մոսկվայի պարագայում ունենք միջնորդ, որը ստանձնել է որոշակի պարտավորություններ, եւ, հետեւաբար, իմ սպասելիքները նրանից ավելի շատ է»:

Նրա խոսքով՝ երբ «էկոակտիվիստները» փակել էին դեպի Արցախ ճանապարհը, ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը հայտարարեց, որ միջանցքի բացումն օրերի հարց է: «Մտածում էի՝ հիմք ունի, որ այդպես է ասում, բայց, դրա փոխարեն, անցակետ տեղադրվեց: Նույն Լավրովն ասում էր՝ բացառվում է անցակետը: Չեմ կարող հասկանալ ՌԴ պահվածքը»,- ասել է Խաչատրյանը: Հետարքրիր է մի բան՝ արդյոք ինքնագլուխ է Խաչարյանն անում այս հայտարարությունը, թե ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ համաձայնեցված է. երկու դեպքում էլ նրա արածը որեւէ տրամաբանության մեջ չի տեղավորվում:

ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵ՝ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները Արցախից հայտնում են, որ Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը որոշել է ընդառաջ գնալ ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանի առաջարկին եւ, ամենայն հավանականությամբ, առաջիկա մեկ ամսում վստահության հանրաքվե անցկացնել Արցախի Հանրապետությունում: Նշենք, որ մինչեւ հանրաքվե նշանակելը պետք է Արցախի խորհրդարանն իր հաստատումը տա այն անցկացնելու համար: Այս հանրաքվեով Արցախի ժողովուրդը եւս մեկ անգամ կամ «կընտրի» Արայիկ Հարությունյանին, կամ նրան կմերժի: Մեր իրազեկ աղբյուրները նշում են, որ դա տեղի կունենա առաջիկա մեկ ամսվա ընթացքում: Իսկ ինչ վերաբերում է Արթուր Թովմասյանի այն առաջարկին, թե պետք է Սամվել Բաբայանին նշանակել Արցախի պետնախարար, կամ Ռուբեն Վարդանյանին ինչ-որ ձեւով ներգրավել Արցախի կառավարման հարցերին, ապա այդ թեմաները ընդհանրապես չեն քննարկվում Արցախում: Այսինքն՝ պետնախարար Գուրգեն Ներսիսյանը կշարունակի պաշտոնավարել, իսկ Արայիկ Հարությունյանի պաշտոնավարման հարցը կորոշի արդեն արցախցին, բայց, ամենայն հավանականությամբ, Հարությունյանը հանրաքվեի միջոցով կշարունակի կրկին պաշտոնավարել:

ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑՐԵՑ

Կառավարությունն իր վերջին նիստում հավանության արժանացրեց նախագահին, վարչապետին եւ ԱԺ նախագահին, ինչպես նաեւ նրանց ընտանիքի անդամներին պետական բյուջեի միջոցների հաշվին բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպման եւ ֆինանսավորման մասին որոշման նախագիծը: Հետայսու ոչ միայն այդ երեք բարձրաստիճան պաշտոնյաները, այլեւ նրանց կանայք, երեխաներն ու ծնողները բուժում կստանան մեր վճարած հարկերի հաշվին: Թե քանի միլիոնավոր դրամներ կհոսեն այդ նպատակով, ցույց կտա ժամանակը, բայց այս որոշումը աչքի է ընկնում մեկ այլ իրողության ֆոնին. մայիսի 17-ին՝ ադրբեջանական հերթական ռազմական ագրեսիայի ժամանակ, մահացու վիրավորում էր ստացել ոչ միայն զինծառայողը, այլեւ ադրբեջանական ԶՈՒ-ն կրակել էր վիրավորին օգնության հասած շտապօգնության մեքենայի վրա՝ վիրավորելով բուժակին: Ինչպես նկարներից պարզվեց, այդ մեքենան հնամաշ մեքենա էր, մինչդեռ իշխանությունները կարող էին այդ գումարներն ուղղել ոչ թե սեփական բարեկեցությանը, այլ զրահապատ շտապօգնության մեքենաներ ձեռք բերելուն: Դրա հնարավորությունը կա: Փոխարենը կառավարությունը որոշում է ընդունում պաշտոնյաների ու նրանց ընտանիքի անդամների անվճար բուժօգնության մասին, մարդկանց, որոնք այսօր փոխադրվում են զրահապատ մեքենաներով:

ՌԴ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանն ընդունել է ՌԴ տրանսպորտի նախարարության տրանսպորտի անվտանգության վարչության պետ Անատոլի Դեմյանովի գլխավորած պատվիրակությանը:

Նախարարի տեղակալը, ողջունելով հյուրերին, բարձր է գնահատել ռուսական կողմի հետ տրանսպորտի ոլորտում առկա համագործակցությունը:

Խոսելով տրանսպորտի ոլորտում անվտանգության ապահովման մասին՝ կողմերը խոսել են ճանապարհային քարտեզի քննարկման եւ ընթացիկ հարցերի ավելի համակարգային ուսումնասիրության մասին:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաեւ ավիացիոն ու ավտոմոբիլային հաղորդակցությանը, հանրային տրանսպորտի ենթակառուցվածքներին, երկուստեք կարեւորվել է փորձի փոխանակումն ու միջգերատեսչական ակտիվ աշխատանքի շարունակությունը:

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԸ

ՀՀ գլխավոր դատախազությունը 570 հազար դրամի ծաղկային կոմպոզիցիաներ է գնել: Armlur.am-ը տեղեկացավ, որ դատախազությունը մեկ անձից գնումների ընթացակարգով պայմանագիր է կնքել «Էլվա գոլդ» ընկերության հետ: Պայմանագրից տեղեկանում ենք, որ դատախազությունը 13 հատ ծաղկային կոմպոզիցիա է գնել եւ այդ ամենի համար վճարել 570 հազար դրամ: Հավելենք, որ այս ընկերության մասին այնքան էլ տեղեկություններ հայտնի չեն, սակայն նշվում է, որ ընկերության տնօրենը Անուշ Վիրաբյանն է:

2022Թ.-Ի ՀԱՐԿԵՐԸ

Մայիսի 29-ին խորհրդարանում մեկնարկելու են 2022 թվականի պետական բյուջեի նախագծի կատարման հաշվետվությունը: Այն կսկսվի մշտական հանձնաժողովների համատեղ նիստերում:

Armlur.am-ը տեղեկացավ, որ մայիսի 29-ին նախատեսված է նաեւ Նիկոլ Փաշինյանի այցը խորհրդարան: Այդպիսով, տեղեկացանք, որ ՀՀ 2022թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության համաձայն՝ պետական բյուջե է մուտքագրվել 1,819.0 մլրդ դրամի հարկ եւ 106.8 մլրդ դրամի տուրք: 2013-2022թթ. ԱԱՀ եւ եկամտային հարկի գծով վճարները կազմել են պետական բյուջեի եկամուտների հիմնական մասը: Այդ երկու հարկատեսակների գծով մուտքերը 2013-2021թթ. կազմել են հարկերի եւ տուրքերի 60.4-67.4 տոկոսը: 2022թ. վերջին 10 տարվա ընթացքում առաջին անգամ ԱԱՀ եւ եկամտային հարկի գծով մուտքերը հարկերի եւ տուրքերի 60 տոկոսից պակաս են եղել:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՆԵԼԻ Է

Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հայտարարել է խաղաղության պայմանագրի նախագծի մի քանի հարցերի շուրջ առաջընթացի մասին: «Այն հարցերում, ինչպիսիք են հաղորդակցությունների ապաշրջափակումը, Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա սահմանազատումը, փոխըմբռնում է զգացվում: Իհարկե, մենք պետք է աշխատենք այս գործընթացի պարամետրերի հետագա հստակեցման ուղղությամբ»,- ասել է նա Մոսկվայում Ադրբեջանի եւ Ռուսաստանի գործընկերների հետ բանակցություններում: Միրզոյանն ընդգծել է հետագա էսկալացիայի կանխարգելման եւ ուժի կիրառումից զերծ մնալու կարեւորությունը: «Հայաստանը հավատարիմ է մնում մեր ղեկավարների բոլոր եռակողմ հայտարարություններին: Մենք աշխատելու ենք կառուցողական»,- եզրափակեց նա: ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը նույնպես հայտարարել է, որ Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների պայմանավորվածությունները այլընտրանք չունեն: «Ռուսաստանը լիովին շահագրգռված է Հարավային Կովկասում խաղաղության հաստատմամբ եւ կանի ամեն ինչ, որպեսզի իրավիճակի կայունացման որոշումները իրականացվեն»,- ասել է նա:

Լավրովը նշել է, որ, Ղարաբաղում եւ սահմանին իրավիճակի կայունացմանը զուգահեռ, անհրաժեշտ է լուծել հումանիտար խնդիրները, ապաշրջափակել տնտեսական եւ տրանսպորտային կապերը եւ համաձայնեցնել խաղաղության պայմանագրի տեքստը: Ավելի վաղ Միրզոյանի հետ երկկողմ հանդիպմանը ՌԴ ԱԳՆ ղեկավարը երկրների միջեւ առեւտրատնտեսական համագործակցությունն անվանել էր «հայ-ռուսական հարաբերությունների իրական լոկոմոտիվ»: «Հույս ունենք, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մայիսի 25-ին Մոսկվայում կմասնակցի Բարձրագույն տնտեսական խորհրդի նիստին: Մենք շահագրգռված ենք նպաստել Հայաստանի եւ Ռուսաստանի ղեկավարների միեւ բոլոր պայմանավորվածություններին»,- ընդգծել է նա:

Միրզոյանն իր հերթին մատնանշել է, որ Ռուսաստանը կորցրել է վերահսկողությունը Լաչինի միջանցքի նկատմամբ: Նա հիշեցրել է այնտեղ Բաքվի անցակետի տեղադրման մասին: «Թեեւ 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության մեջ հստակ ասվում է, որ միջանցքը պետք է մնա Ռուսաստանի վերահսկողության տակ, ցավոք, դա հիմա չի կարելի ասել»,- ընդգծեց Միրզոյանը: Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների նախորդ բանակցությունները ԱՄՆ-ում կայացել են մայիսի 1-4-ը:

Վաշինգտոնում նրանք հանդիպել են Էնթոնի Բլինքենի եւ ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջեյք Սալիվանի հետ: Բանակցություններից հետո Հայաստանի ԱԳՆ-ն հայտարարել է, որ Երեւանն ու Բաքուն առաջընթաց են գրանցել, սակայն որոշ հարցերի շուրջ կողմերի դիրքորոշումները դեռեւս տարբերվում են: Ադրբեջանի ԱԳՆ-ն նաեւ հայտարարել է, որ ԱՄՆ-ում կայացած բանակցություններում կողմերին հաջողվել է համաձայնության գալ խաղաղ համաձայնագրի որոշ կետերի շուրջ՝ ընդգծելով, որ բավարար տարաձայնություններ են մնացել: Բլինկենը նշել է, որ Երեւանն ու Բաքուն «շոշափելի առաջընթաց» են գրանցել, իսկ վերջնական համաձայնությունը «հասանելի է»:

ԼՈՒՐԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը մայիսի 18-ին հանդիպել է Ազգային ժողովի «Ազատ հայրենիք-ՔՄԴ» խմբակցության պատգամավորների հետ:

Քննարկվել են Արցախի առջեւ ծառացած ներքին եւ արտաքին մարտահրավերները, շեշտվել է ստեղծված իրավիճակում ներքին կայունության պահպանման անհրաժեշտությունը:

Նախագահ Հարությունյանը հայտարարել է, որ առաջիկայում լսելու է բոլոր շահագրգիռ կողմերի տեսակետները, քննարկելու է առաջարկները:

«Քաղաքական խորհրդակցությունների ավարտին ընդունվելու են որոշումներ, որոնք հնարավորություն կտան խուսափել ներքաղաքական ճգնաժամից եւ չխարխլել պետականության հիմքերը»,- նշել է ԱՀ նախագահը:

ԽՈՍՏՈՒՄ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանը հաստատել է, որ մտադիր է աշխատել ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի հետ մայիսի 28-ին կայանալիք նախագահական ընտրությունների երկրորդ փուլում իր հաղթանակի դեպքում:

«Անկասկած, ես կաշխատեմ պարոն Բայդենի հետ»,- ասել է նա՝ պատասխանելով CNN հեռուստաալիքի հաղորդավարուհու համապատասխան հարցին:

Էրդողանը նշել է, որ Բայդենի՝ ԱՄՆ նախագահի պաշտոնից հեռանալու դեպքում «կաշխատի նրա հետ, ով կփոխարինի Բայդենին»:

ՔԱՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Թուրքիայի, ՌԴ-ի, Սիրիայի եւ Իրանի պատվիրակությունների հանդիպումը՝ համապարփակ բանակցությունների համար, հնարավոր է հունիսի վերջին:

«Արտաքին գործերի նախարարների վճռական հանդիպումից հետո Թուրքիայի եւ Սիրիայի հարաբերությունների կարգավորման գործընթացում հաջորդ շփումը նախատեսվում է փոխնախարարների միջեւ: Որպես համապարփակ բանակցությունների ժամկետ՝ նշվել է հունիսի վերջը»,- գրել է պարբերականը:

Պարբերականի ունեցած տեղեկության համաձայն՝ ԱԳՆ ղեկավարների քառյակի հանդիպումը Մոսկվայում ավելի չափավոր էր, քան տեխնիկական պատվիրակությունների նախորդ հանդիպումները:

«Թուրքիայի առաջնահերթությունների շարքում առավել նկատելի թեման պայքարն է ահաբեկչության դեմ: Այդ հարցի մասին տեղեկացվել է Սիրիայի արտաքին գործերի նախարար Միկդատ Ֆեյսալին բոլոր ասպեկտներով: Առաջարկվել է «նախաձեռնել համատեղ քայլեր ահաբեկչության դեմ պայքարում»: Հայտարարվել է, որ Քրդական աշխատավորական կուսակցության՝ YPG-ի (արգելված է Թուրքիայում) ներկայությունը Թել Ռիֆաաթում եւ Մանբիջում՝ Եփրատից արեւմուտք, կարող է մաքրվել համատեղ գործողությունների ընթացքում, եւ որ այդ շրջանները կարող են վերադարձվել Սիրիայի վերահսկողության տակ: Սիրիական կողմը եւս հասկանալ է տվել, որ կարող է համատեղ գործել ահաբեկչության դեմ պայքարում»,- նշել է թերթը:

Թերթի աղբյուրները տեղեկացրել են, որ Թուրքիան բանակցություններ է վարում նաեւ սիրիական ընդդիմության հետ՝ քաղաքական գործընթացում փոխզիջման հասնելու համար:

«Ինչ վերաբերում է փախստականների վերադարձին, ապա հիմնական սկզբունքը կամավոր, անվտանգ եւ արժանապատիվ վերադարձն է: Այդ նպատակով օրակարգում դրված է այդ գործընթացում Ռուսաստանի, Իրանի եւ Թուրքիայի ներգրավման հարցը՝ որպես երաշխավորների»,- տեղեկացրել է թերթը:

7 ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐ

ԿԵՂԾ ՍԵՐՏԵՖԻԿԱՏՆԵՐ՝ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԴԵՄ

ՀՀ ֆինչական կոմիտեի Շիրակի մարզային ֆինչական վարչությունում իրականացված ֆինչական եւ վարութային գործողությունների արդյունքում ղարզվել են «Գյումրու Վ. Աբաջյանի անվան ընտանեական բժշկության կենտրոն» ՓԲ ընկերության աշխատակիցների կողմից կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ ամբողջական ղատվաստված լինելու հանգամանքը հավաստող կեղծ սերտեֆիկատների դիմաց առեւտրային կաշառք ստանալու դեպքերի հանգամանքները:

Քրեական վարույթի շրջանակներում մեղադրանք է ներկայացվել ընկերության տնօրենին եւ 6 աշխատակցի: Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ «Գյումրու Վ. Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենը, գործընկերային հարաբերությունների մեջ գտնվելով նույն ընկերության պատվաստման կաբինետի բուժքույր-վակցինատորի պաշտոնը զբաղեցնող աշխատակցի հետ, 2021թ. սեպտեմբերին վերջինիս հանձնարարել է 6-7 անձի վերաբերյալ կազմել եւ տրամադրել «COVID-19» հիվանդության դեմ պատվաստված լինելու հանգամանքը հավաստող կեղծ սերտեֆիկատներ:

Բուժքույրը կազմել է պաշտոնական փաստաթղթեր՝ դրանցում ներառելով իրականությանը չհամապատասխանող ակնհայտ կեղծ տվյալներ ու տեղեկություններ, եւ այդ փաստաթղթերը դրել շրջանառության մեջ: Արդյունքում փաստացի չպատվաստված քաղաքացիների տվյալները մուտքագրվել են էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական «ԱՐՄԵԴ» համակարգ, եւ նրանց անվամբ տրվել են բովանդակությամբ ակնհայտ կեղծ սերտեֆիկատներ:

Քննությամբ պարզվել է նաեւ, որ կենտրոնի մի շարք աշխատակիցներ նյութապես շահագրգռելու եղանակով նշված բժշկական կենտրոնի բուժքրոջը եւ պատվաստման կաբինետի բուժքույր-վակցինատորին դրդել են իրենց ծանոթներին, ինչպես նաեւ տարբեր քաղաքացիների տրամադրել կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ ամբողջական պատվաստված լինելու հանգամանքը հավաստող կեղծ սերտեֆիկատներ:

Որոշ դեպքերում՝ որպես կաշառք տրված գումարների դիմաց, իսկ որոշ դեպքերում էլ, նույն ընկերության աշխատակիցների խնդրանքները կատարելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, բժշկական կենտրոնի բուժքույրը՝ ընդհանուր շուրջ 65, իսկ բուժքույր-վակցինատորը, ընդհանուր շուրջ 120 ՀՀ քաղաքացիների չպատվաստելով սահմանված դեղատեսակներով եւ դեղաչափերով, վերջինների կողմից COVID-19-ի դեմ ամբողջական պատվաստված լինելու վերաբերյալ ակնհայտ կեղծ տեղեկություններ եւ գրառումներ են կատարել համապատասխան մատյաններում եւ անկետաներում: Դրանց հիման վրա կազմված ակնհայտ կեղծ տեղեկություններ պարունակող փաստաթղթերը դրվել են շրջանառության մեջ՝ մուտքագրվել են «ԱՐՄԵԴ» համակարգ, եւ նրանց անվամբ տրվել են բովանդակությամբ ակնհայտ կեղծ սերտիֆիկատներ: Այդ քաղաքացիներին հնարավորություն է տրվել շրջանցել Հայաստանի Հանրապետությունում եւ օտարերկրյա պետություններում հակահամաճարակային միջոցառումների շրջանակներում կիրառված սահմանափակումները:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ «Գյումրու Վ. Աբաջյանի անվան ընտանեական բժշկության կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենին մեղադրանք է ներկայացվել՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար, ընկերության բուժքրոջը եւ բուժքույր-վակցինատորին՝ առեւտրային կաշառք ստանալու եւ փաստաթղթեր կեղծելու, ընկերության եւս 4 աշխատակցի մեղադրանք է ներկայացվել՝ առեւտրային կաշառք ստանալուն եւ փաստաթղթեր կեղծելուն դրդելու (օժանդակելու) համար: Մեղադրյալներից 5-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը, իսկ երկուսի նկատմամբ՝ գրավը:

Նախաքննությունն ավարտվել է: Քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

ԼՈՒՐԵՐ

ԸՆԿԵԼ Է ԷԼԵԿՏՐԱԳՆԱՑՔԻ ՏԱԿ

Մայիսի 18-ին՝ ժամը 13:30-ի սահմաններում, Արագած-Քարակերտ հատվածում «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության Գյումրի-Երեւան երթուղով ընթացող ԷՊ-2Դ էլեկտրագնացքը վրաերթի է ենթարկել ճանապարհին հայտնված մի մարդու. տեղեկացնում են ՀԿԵ-ից:

Էլեկտրագնացքի մեքենավարն արտակարգ արգելակում է կիրառել, սակայն չի կարողացել կանխել բախումը: Տուժածը՝ 1962թ. ծնված Հրաչ Միհրանի Մկրտչյանը, ծանր վիճակում տեղափոխվել է հիվանդանոց:

Երթուղով գնացքների երթեւեկության ժամանակացույցը խախտվել է ավելի քան 2 ժամով: «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունը հայցում է ընկերության վերահսկողությունից անկախ միջադեպի հետեւանքով տուժած ուղեւորների ներողամտությունը:

Ընկերությունը եւս մեկ անգամ հորդորում է քաղաքացիներին եւ տրանսպորտային միջոցների վարորդներին հետեւել ճանապարհային երթեւեկության կանոններին, դուրս չգալ երկաթուղային գծեր եւ զգոն լինել երկաթուղային ենթակառուցվածքներում:

ԿՐԱԿՈՑՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԸ

Երեկ՝ մայիսի 19-ին, կրակոցներ են հնչել Երեւանում: Ժամը 9:20-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Մաշտոցի բաժին ահազանգ է ստացվել, որ Բաշինջաղյան 166 տան դիմաց կրակոցներ են հնչել:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ դեպքի վայրից 1 հոգի հրազենային վնասվածքներով տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն:

Վիրավորը Դավիթաշեն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Կորյուն Մխիթարյանն է:

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ Դավիթաշենի թաղապետի տեղակալի վրա կրակելու պատճառը եղել է այն, որ երկու մեքենայի վարորդներ չեն զիջել ճանապարհը միմյանց, ինչից հետո սկսվել է լեզվակռիվ, եւ արտասահմանյան ամենագնաց մեքենայից կրակոցներ են արձակել Դավիթաշեն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Կորյուն Մխիթարյանի ուղղությամբ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐ ԿԱՆ

Մայիսի 18-ին՝ կեսգիշերն անց, Քրեական ոստիկանության գլխավոր վարչության ծառայողները, օպերատիվ տվյալներն իրացնելով, ոստիկանության Լոռու մարզային վարչության եւ Թումանյանի բաժնի գործընկերների հետ իրականացրած ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ Ալավերդի քաղաքի Սանահին Կայարան թաղամասի շենքերից մեկում հայտնաբերել ու ձերբակալել են Քրեական օրենսգրքի սպանության եւ ապօրինի կերպով զենք կրելու մեղադրանքներով 2021 թվականից հետախուզվող 29-ամյա մի երեւանցու:

Հիշեցնենք մանրամասները. 2021 թվականի նոյեմբերի լույս 11-ի գիշերը՝ ժամը 2.45-ից սկսած, մայրաքաղաքի տարբեր բժշկական կենտրոններից ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին ահազանգեր էին ստացվել, որ հրազենային վնասվածքներով հոսպիտալացվել է 6 անձ: Նրանցից 61-ամյա Արտուշ Սիմոնյանն ու 38-ամյա Արթուր Բորյանը, գիտակցության չգալով, մահացել էին: Հիվանդանոցներ մեկնած օպերատիվ խմբերը պարզել էին, որ տղամարդիկ վնասվածքները ստացել են սպանվածներից Արտուշ Սիմոնյանի՝ Քանաքեռի 16-րդ փողոցի թիվ 16 տանը: Իրավապահները հիշյալ տան բակում հայտնաբերել էին 4 ատրճանակ, երկու ինքնաձիգ, 4 տասնյակից ավելի պարկուճ: Տան բակում էին նաեւ 43-ամյա Արթուր Ղազարյանի եւ 37-ամյա Արայիկ Խաչատրյանի դիերը: Նրանք ստացել էին կյանքի հետ անհամատեղելի հրազենային վնասվածքներ:

Հայտնաբերված հետախուզվողը կալանավորվել է, նախաքննությունը շարունակվում է:

Հետախուզվողը հայտնաբերվել է Ոստիկանության Նոր Նորքի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ՝ մայիսի 17-ին Ջուղայի փողոցի շենքերից մեկում հայտնաբերվել եւ բաժին է ներկայացվել 30-ամյա Մովսես Մ.-ն, որը հետախուզվում էր ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի (Դասալքությունը) 3-րդ մասի մեղադրանքով:

Խափանման միջոցը՝ բացակայելու արգելք:

ՀՐԱԴԱԴԱՐԻ ԽԱԽՏՈՒՄ

Մայիսի 18-ին Ադրբեջանի ԶՈՒ-ն շփման գծի հյուսիսային, արեւելյան եւ կենտրոնական ուղղությամբ խախտել է հրադադարը՝ կիրառելով հրաձգային զենք եւ ՀԱՆ-17 նռնականետ. այս մասին հայտնում են Արցախի ՊՆ-ից:

«Բերդաշեն գյուղի հատվածում ադրբեջանական կողմը կրակ է բացել այգում աշխատող քաղաքացիական անձանց եւ ՀԱՆ-17 նռնականետից Կաշենի հանքավայրի ուղղությամբ: Հայկական կողմը կորուստներ չունի:

Ժամը 10:00-ի դրությամբ իրավիճակը շփման գծում հարաբերականորեն կայուն է»,- նշվում է հաղորդագրության մեջ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 18-ից 19-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 65 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ՉԵՆ

Տավուշի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողային հաշվեկշռի, կազմում են 110 665,6 հեկտար, մարզում ոռոգելի հողատարածքները կազմում են 6779,9 հեկտար, որից տնամերձեր՝ 1215,8 հեկտար: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝ հարցնելով, թե 2023 թվականին որքան են ավելանալու Տավուշի մարզի ոռոգելի հողատարածքները, որ ծրագրերով, ում ֆինանսավորմամբ են իրականացվելու այդ ծրագրերը: Մարզպետարանից ստացված գրավոր պատասխանում նշված է, որ 2023 թվականին մարզի ոռոգելի հողատարածքները, ըստ նախնական հայտի, կավելանան 130 հա-ով: Կիսատ-պռատ պատասխան է. չի նշված, թե այդ 130 հեկտարը ինչ ծրագրերով, ում ֆինանսավորմամբ է ոռոգելի դառնալու:

ՀՐԱԺԱՐՎԵԼ ԵՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՄԵԿՆԵԼՈՒՑ

Գրիգորի Ներսիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2020 թվականի սեպտեմբերի 29-ից մինչեւ 2021 թվականի մարտի 1-ը հանդիսանալով ՀՀ ՊՆ Ն զորամասի երկրորդ հրաձգային գումարտակի հրամանատար, ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 1586-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության ժամանակ հրաժարվել է զինվորական ծառայության առանձին պարտականությունները կատարելուց, այն է՝ ՀՀ ՊՆ թիվ Ն զորամասի հրամանատարի՝ 2020 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 066 մարտական կարգադրությամբ Արցախի Հանրապետություն մեկնելուց եւ ՀՁԽ հրամանատարի անմիջական ենթակայության տակ անցնելուց, որը զուգորդվել է փաստացի չկատարմամբ. 2020 թվականի հոկտեմբերի 21-ին Վայոց ձորի Գետափ գյուղի հարակից տարածքից վերադարձել է զորամասի տեղակայման վայր: Նույն մեղադրանքն առաջադրվել է նաեւ նույն՝ երկրորդ գումարտակի հրամանատարի տեղակալ-շտաբի պետ Կարեն Ավագյանին, երկրորդ գումարտակի հրամանատարի բարոյահոգեբանական ապահովման գծով տեղակալ Սուրեն Բրուդյանին, երկրորդ գումարտակի հրամանատարի սպառազինության գծով տեղակալ Ռոման Դավթյանին, երկրորդ գումարտակի 5-րդ հրաձգային վաշտի հրամանատար Սուրեն Բաղդյանին, երկրորդ գումարտակի 6-րդ հրաձգային վաշտի հրամանատար Համլետ Իսպիրյանին, երկրորդ հրաձգային գումարտակի 5-րդ հրաձգային վաշտի 1-ին դասակի հրամանատար Աղասի Սարգսյանին, երկրորդ հրաձգային գումարտակի 5-րդ հրաձգային վաշտի կրակային աջակցման դասակի հրամանատար Սասուն Ամիրզյանին, երկրորդ հրաձգային գումարտակի 6-րդ հրաձգային վաշտի կրակային աջակցման դասակի հրամանատար Կարեն Ստեփանյանին, երկրորդ գումարտակի հակատանկային դասակի հրամանատար Գեւորգ Տիտանյանին: Նրանց բոլորին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 364 հոդվածի 3-րդ մասով, խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը: Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում այդ քրեական գործով դատավարություն է ընթանում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՓԱՍՏԱԲԱՆ

ԶԻՆՎՈՐԻ ՄՈՐԸ ՍՊԱՌՆՈՒՄ Է 4-8 ՏԱՐՎԱ ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄ

Զոհված զինծառայող Ժորա Մարտիրոսյանի մոր՝ Գայանե Մարտիրոսյանի գործով միջնորդությամբ ներկայացվել էր խափանման միջոցի երեք հիմնավորում, որոնցից մեկից դատախազն ու քննիչները հրաժարվել են: Այս մասին մայիսի 19-ին դատարանի դիմաց լրագրողների հետ զրույցում ասաց Գայանե Մարտիրոսյանի փաստաբան Վահան Հովհաննիսյանը:

«Խափանման միջոցի միջնորդությամբ ներկայացվել էր երեք հիմնավորում՝ փախուստը, նոր հանցանքի կատարումը եւ դատավարությամբ իր վրա դրված պարտավորությունների չկատարելը, որը կարող էր դրսեւորվել վկաների վրա անօրինական ազդեցությամբ: Միջնորդության քննության ընթացքում փախուստի հիմքից հրաժարվեցին դատախազն ու քննիչները: Ինչպես հասկացանք, կա՛մ տեխնիկական վրիպակ էր, կա՛մ միջնորդության քննության ժամանակ հանգեցին հետեւության, որ պետք է հրաժարվեն: Իմ պրակտիկայում աննախադեպ երեւույթ էր, երբ միջնորդություն ներկայացնող անձը քննության ընթացքում հիմքերից մեկից հրաժարվում է: Ամեն դեպքում, դա ողջունելի երեւույթ է: Մնաց երկու հիմք՝ նոր հանցանքի կատարումը եւ ազդեցությունը»,- ասաց նա:

Հարցին, թե ինչ պատասխանատվություն է սպառնում ցուցմունքի բավարարման դեպքում, փաստաբանը նշեց, որ 191-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով սահմանվում է 4-8 տարվա ազատազրկում, քանի որ համարվում է ծանր հանցագործություն:

Նա անդրադարձավ նաեւ դատավորին՝ նշելով, որ ինքնաբացարկի միջնորդության համար որեւէ հիմք չկա. «Յուրաքանչյուր դատավոր անաչառ, անկողմնակալ արբիտր է, բայց շատ դեպքերում մենք տեսնում ենք, որ դատավորներն անմասն են մնում միջնորդության քննարկման ժամանակ: Կողմերը ներկայացնում են իրենց փաստարկները, հակափաստարկները, դատավորը ընդամենը լսում է: Այս դեպքում նախագահող դատավորը մանրամասն եւ խորությամբ հարցեր տվեց թե՛ պաշտպանական կողմին, թե՛ դատախազին, վարույթն իրականացնող մարմնին: Մեզ մոտ այն տպավորությունը ստեղծվեց, որ իրականում մանրամասն ծանոթացել է ե՛ւ միջնորդությանը, ե՛ւ հիմնավորումներին: Կարող եմ ասել, որ միջնորդության օբյեկտիվ քննություն է ընթանում: Դատավորի անաչառության հետ կապված որեւէ բան չեմ կարող ասել, որովհետեւ այդպիսիք չկան»:

Նշենք, որ Շենգավիթի ընդհանուր իրավասության դատարանը մայիսի 19-ին քննում էր 44-օրյա պատերազմում զոհված Ժորա Մարտիրոսյանի մայրիկին՝ Գայանե Մարտիրոսյանին կալանավորելու միջնորդությունը:

Հիշեցնենք, որ մայիսի 17-ին վարչապետի ընտանիքին պատկանող «Հայկական ժամանակը» տեղեկություն էր տարածել, թե «Որդիների կանչ» ՀԿ-ի անդամները փորձել են առեւանգել վարչապետի որդուն: Ըստ թերթի՝ զոհված զինծառայողների ծնողները ստիպել են Աշոտ Փաշինյանին նստել իրենց մեքենան, սակայն նրան հաջողվել է դուրս նետվել մի պահ կանգ առած մեքենայից, ինչի հետեւանքով նրան վրաերթի է ենթարկել նույն կազմակերպության անդամների հետեւից ընթացող մեքենան:

Աշոտ Փաշինյանը դեպքի առնչությամբ հաղորդում է ներկայացրել: Քննչական կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ մարդուն առեւանգելու հոդվածով. ձերբակալվել է Գայանե Մարտիրոսյանը:

Տիկին Գայանեն անժամկետ հացադուլ է հայտարարել:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

ԹՈՒՆԱՎՈՐՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐ

Ոստիկանությունից հաղորդում է ստացվել այն մասին, որ 2023թ. մայիսի 18-ին թունավորված վիճակում Արտաշատ քաղաքի թիվ 4-րդ մանկապարտեզի մի քանի սան տեղափոխվել են Արտաշատի բժշկական կենտրոն: Նույն օրը՝ երեկոյան, նաեւ Արտաշատի Ք/Կ-ից է հաղորդում ստացվել, որ սննդային թունավորում ախտորոշմամբ իրենց մոտ են ընդունվել թվով 14 երեխաներ:

Պարզվել է, որ երեխաները բուժհաստատություն հիմնականում սկսել են տեղափոխվել նույն օրը՝ ժամը 15:30-ից սկսած՝ մանկապարտեզից տուն վերադառնալուց հետո:

Դեպքի առթիվ մայիսի 19-ին ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչությունում, ՀՀ քրեական օրենսգրքի 412-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Իրականացվում է նախաքննություն՝ դեպքի հանգամանքները, երեխաների թունավորման պատճառները, բնույթը, եղանակը պարզելու ուղղությամբ:

Արտաշատ քաղաքի թիվ 4-րդ մանկապարտեզից վերցվել են սննդի եւ ջրի նմուշներ, սննդի առաքման փաստաթղթերը եւ պահպանման մատյանները:

Նշանակվել է դատասնդային, դատանյութագիտական եւ դատաբժշկական համալիր փորձաքննություն:

Նախաքննությունը շարունակվում է:

Հինադանոց տեղափոխված երեխաների վիճակը, նախնական տվյալներով, բավարար է, նրանցից մի քանիսն արդեն դուրս են գրվել բուժհաստատությունից:

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմից էլ հայտնում են. «Երեկ՝ 18.05.2023թ.՝ ժամը 22:30-ին, ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արարատի մարզային կենտրոնը բանավոր ահազանգ է ստացել Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ից այն մասին, որ սննդային թունավորման նշաններով «Արտաշատի բժշկական կենտրոն» ԲԲԸ են տեղափոխվել «Արտաշատ քաղաքի թիվ 4 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ հաճախող 3-4 տարեկան 6 երեխա: Մեկ երեխա տեղափոխվել է Երեւանի «Մուրացան» հիվանդանոցային համալիր: 19.05.2023թ. առավոտյան ժամը 10:30-ի դրությամբ հիվանդանոց տեղափոխված երեխաների թիվը հասել է 16-ի, որոնցից 2-ը գտնվում են ինֆեկցիոն բաժանմունքում: Երեխաների վիճակը գնահատվել է բավարար: Նախնական ախտորոշվել է սննդային թունավորում (չճշտված) եւ փսխումային համախտանիշ:

Արագ արձագանքելով ստացված տեղեկատվությանը՝ Արարատի մարզային կենտրոնի տեսուչները ձեռնարկել են վերահսկողական միջոցառումներ, մասնավորապես՝ կատարվել է նմուշառում մանկապարտեզի 18.05.2023թ. ճաշացանկում ներառված սննդամթերքից (խաշած ձու, թանապուր, ոլոռով սուպ, մակարոնով փլավ): Նմուշները ներկայացվել են լաբորատոր փորձաքննության, արդյունքները կհրապարակվեն:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 18 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 26-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»-Ի ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

«Կոնվերս բանկ»-ն ամփոփել է MC Woman'sCard քարտապանների համար արշավի արդյունքները՝ հաղթողներին հանձնելով արժեքավոր մրցանակներ:

Արշավին մասնակցել են բանկի մոբայլ հավելվածի օգտատեր, Mastercard Woman'sCard բոլոր քարտապանները:

Հաղթողները որոշվել են պատահականության սկզբունքով եւ կազմակերպված միջոցառման ժամանակ ստացել մրցանակները՝ Միջերկրական ծովով ճամփորդության ուղեգիր՝ երկու անձի համար, 2 Apple watches Ultra Series, 3 Fujifilm Instax Mini 11, 3 Xiaomi power bank, 5 Xiaomi LED makeup mirror:

«Ինձ հաջողակ եմ համարում, միշտ դրական եմ տրամադրվում, եւ հաճախ կյանքը զարմացնում, ուրախացնում է իր անակնկալներով: «Կոնվերս բանկ»-ի այս մրցանակը մեծ ոգեւորություն պարգեւեց: Ո՞վ չի երազում մեկնել ճամփորդության, այն էլ՝ անվճար: Այս անգամ բախտն ինձ ժպտաց: Համոզված եմ, որ «Կոնվերս բանկ»-ն այուհետ եւս այսպիսի անակնկալներ է մատուցելու հավատարիմ հաճախորդներին»,- իր խոսքում ասել է գլխավոր մրցանակակիր Նարինե Հայրապետյանը:

Բանկում նշվել է, որ հաճախորդների խրախուսման արշավները լինելու են շարունակական՝ ընդգրկելով հաճախորդների հնարավորինս լայն շրջանակ: Դրանցից առաջինի մասին «Կոնվերս բանկ»-ը կհայտարարի առաջիկա օրերին:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԻՐԱՑՎԵԼ Է ՈՐՊԵՍ ԹԹՎԱՍԵՐ

«Արբան» եւ «Պարգեւ» ՍՊ ընկերությունների կողմից բուսական յուղի առկայությամբ «Աշտարակ կաթ» ապրանքային նշանով արտադրանքը մակնշվել եւ իրացվել է որպես թթվասեր:

Այս մասին հայտնում են ՄՊՀ-ից:

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը «Արբան» եւ «Պարգեւ» ՍՊ ընկերությունների նման վարքագիծը որակել է հասարակության մոլորեցման դրսեւորմամբ անբարեխիղճ մրցակցություն եւ թիվ 217-Ա որոշմամբ նշանակել է 17 504 452 ՀՀ դրամի չափով տուգանք:

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՔԱՂԱՔԱՏԵՂԻԻ ՊԵՂՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ԿԳՄՍ նախարարության պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության աշխատակիցներն այցելել են ՀՀ Արմավիրի մարզի Երվանդաշատ բնակատեղի եւ Սուրբ Շուշանավանք եկեղեցի:

Հին Երվանդաշատը գտնվում է Հայաստանի եւ Թուրքիայի սահմանագոտում: Խորհրդային տարիներին այդ տեղանքներում հնագիտական ուսումնասիրություններ չեն կատարվել, եւ միայն կարճատեւ այցերի եւ աղբյուրագիտական տվյալների հիման վրա է որոշվել պատմական Երվանդաշատի տեղը: Հնագիտական եւ հետախուզական պեղումներ Երվանդաշատ եւ Բագարան գյուղերի տարածքներում իրականացվել են 2005-2012 թթ. ՀՀ ԳԱԱ կողմից՝ Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի ղեկավարությամբ: Հիմնական պեղվող հուշարձանը եղել է Երվանդ արքայի հիմնադրած որսորդական պալատը:

Պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության աշխատակիցներն այցի ընթացքում ծանոթացել են սահմանամերձ Երվանդաշատ քաղաքատեղիի ներկա վիճակին, ուսումնասիրել պահպանված ավերակները եւ դիտարկել հետագա պեղումների հնարավորությունը: Սահմանամերձ փակ գոտում գտնվելը նպաստել է հուշարձանի պահպանմանը: Ըստ դիտարկման արդյունքների՝ առկա են կացարանների պատերը, սենյակները եւ կարասները: Պեղումներից հետո կարասային սրահների ոչ բավարար ամրակայման հետեւանքով դրանք հայտնվել են ոչ պատշաճ վիճակում: Խնդիրներին լուծում տալու նպատակով առաջիկայում միջոցներ կձեռնարկվեն:

Հաջորդ հուշարձանը ՀՀ Արմավիրի մարզի Բագարան գյուղի մոտ գտնվող Սուրբ Շուշանավանք եկեղեցին էր, որը թվագրվում է 10-րդ դարասկզբով՝ կառուցված Աշոտ Բագրատունու օրոք: Վեցախորան եկեղեցու հարավարեւմտյան խորանին կցված կառույցներից պահպանվել են քառախորան եկեղեցու արեւմտյան եւ հյուսիսային խորանների միացման հանգույցը եւ վեցխորան եկեղեցու հարավային պատին կցված հինգ աստիճաններով գաղտնուղու թաղի հյուսիսային հատվածը: Եկեղեցու գլխավոր՝ արեւմտյան կամարակապ մուտքն այժմ փակված է կոպտատաշ շարվածքով: Թե՛ արեւմտյան եւ թե՛ հարավարեւմտյան մուտքերի ճախակողմյան մասում պահպանվել են կամարակապ շքամուտքի որմնասյուները:

Մասնագիտական խումբը դիտարկել է եկեղեցու վերականգնման հնարավորությունը՝ հաշվի առնելով տեղադիրքը (այն նույնպես գտնվում է սահմանամերձ փակ գոտում), մոտեցման ճանապարհը, տեխնիկայի համար տարածքի հասանելիությունը:

Առաջիկայում կկազմվի Շուշանավանքի ամրակայման, նորոգման եւ վերականգնման տեխնիկական բնութագիրը, որից հետո կհայտարարվի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման մրցույթը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ԿԱՋՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

2023թ. հունիսի 8-ին՝ ժամը 12:30-ին, Գառնիկ Կիրակոսյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, սենյակ 311 հասցեում կանցկացվի «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում գրավադրված եւ սեփականության իրավունքով Գառնիկ Կիրակոսյանին պատկանող անշարժ գույքի աճուրդ՝ 1 ԼՈՏ-ով: Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ-1. ՀՀ ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Շերամի փողոց, 23 շենք, 3 բնակարան հասցեի անշարժ գույքը, 77.3 քմ մակերեսով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 17102019-01-0101 վկայական:

Մեկնարկային գինը սահմանվում է 23,004,000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

- աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով (բայց ոչ ավելի 200,000 ՀՀ դրամից) մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը,
- աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի մասնակցության վճարը եւ նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Գառնիկ Կիրակոսյանի սնանկության հաշվին՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի «Նոր Արեշ» մասնաճյուղ՝ 1150021127007018 հաշվեհամարին, մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն, կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան /ք. Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով. հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ՝ դիմելով կառավարիչ Ա. Էլոյանին / 094 411 487/:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԱՐԶԱՁԵՎ

ԿԳՄՄՆ ԿՆՔԵԼ Է ԵՌԱԿՈՂՄ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ ԿԳՄՄՆ հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչությունից ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Սեղանի ֆուտբոլի Հայաստանի եւ միջազգային ֆեդերացիաների միջեւ կնքվել է եռակողմ հուշագիր՝ ի նպաստ Հայաստանում մարզաձեւի զարգացմանը ու մասսայականացմանը: Հուշագիրը ստորագրել են ԿԳՄՄ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը եւ Հայաստանի սեղանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Գոռ Ավետիսյանը: Այն էլեկտրոնային եղանակով կստորագրի նաեւ մարզաձեւի միջազգային ֆեդերացիայի նախագահ Ֆարիդ Լունիսը:

ԿԳՄՄ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը հույս է հայտնել, որ հուշագրի կնքումը կնպաստի մարզաձեւի զարգացմանն ու նոր նախագծեր իրականացնելու ավելի լայն հնարավորություններ կընձեռի: «Սեղանի ֆուտբոլը զարգացող մարզաձեւ է, իսկ դա նշանակում է՝ պետք է այն պահենք ուշադրության կենտրոնում: Ճիշտ է՝ այն օլիմպիական մարզաձեւ չէ, բայց հատկապես դպրոցահասակ երեխաների համար ֆիզիկական ակտիվության ապահովման լավ այլընտրանք է»,- ասել է Կարեն Գիլոյանը՝ փաստելով, որ պետությունն աջակցում է մարզաձեւի՝ դպրոցահասակ երեխաների շրջանում մասսայականացման գաղափարին:

Կողմերը տեսակապով զրուցել են նաեւ Սեղանի ֆուտբոլի միջազգային ֆեդերացիայի նախագահ Ֆարիդ Լունիսի հետ: Վերջինս փաստել է՝ Հայաստանում մարզաձեւի զարգացման լուրջ հեռանկարներ կան: Հայաստանի սեղանի ֆուտբոլի ֆեդերացիայի ներկայացուցիչների խոսքով՝ պետության աջակցությունը զգալը շատ կարեւոր է մարզաձեւի հետագա զարգացման ճանապարհին: Հայաստանի սեղանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Գոռ Ավետիսյանի խոսքով՝ ամենակարեւոր նախագծերից մեկը «100 ֆուտբոլի սեղան՝ դպրոցներին» ծրագիրն է, ինչպես նաեւ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար մարզաձեւով զբաղվելու հնարավորությունների ապահովումը հատուկ սեղանների միջոցով: «100 ֆուտբոլի սեղան՝դպրոցներին» նախագիծը պիլոտային ծրագիր է, որը միջազգային ֆեդերացիայի նախաձեռնությամբ իրականացվելու է 10 երկրում, այդ թվում՝ Հայաստանում: «Նպատակն այն է, որ երեխաներն ավելի քիչ զբաղվեն հեռախոսներով եւ ֆիզիկապես ակտիվ լինեն: Ծրագրի շրջանակում Երեւանի եւ մարզերի դպրոցներում անվճար հիմունքներով կտեղադրվեն ֆուտբոլի 100 սեղաններ, որոնցով երեխաները կխաղան դասամիջոցներին կամ դասերից հետո: Հաջորդ քայլն այդ դպրոցներում խմբակների հիմնումն է, իսկ ֆեդերացիան տրամադրելու է լավագույն մարզիկներին ու մարզիչներին երեխաների հետ աշխատելու նպատակով»,- ասում է Գոռ Ավետիսյանը:

Նրա խոսքով՝ մարզաձեւը Հայաստանում բավականին լայն տարածում ունի. կազմակերպվում են նաեւ ներքին առաջնություններ, միջազգային մրցաշարեր: Ապագայի հետ կապված ծրագրերն էլ շատ հավակնոտ են: «Մեզ մի քանի քայլ է բաժանում սեղանի ֆուտբոլի աշխարհի խաղերը Հայաստանում ընդունելուց: Արդեն իսկ միջազգային մրցաշար ենք կազմակերպել ու ամեն տարի նախատեսում ենք 6-7 մեծ մրցաշար անցկացնել մեր երկրում: Նախորդ երկու տարիներին մեր հավաքականները մասնակցել են Եվրոպայի ու աշխարհի խաղերին: Վստահ եմ՝ համատեղ ուժերով կկարողանանք հասնել մեր առջեւ դրված նպատակներին»,- նշում է Գոռ Ավետիսյանը:

Ֆեդերացիայի ներկայացուցիչների խոսքով՝ սեղանի ֆուտբոլով կարող են զբաղվել բոլորը՝ առանց տարիքային, սեռային եւ ֆիզիկական կարողությունների սահմանափակման: «Սա այն սպորտն է, որը նաեւ ժամանցային բաղադրիչ է պարունակում եւ մարդկային ջերմ ու ընկերական հարաբերություն է ձեւավորում նաեւ միջազգային հարթակներում»,- եզրափակում է ֆեդերացիայի նախագահը:

Սեղանի ֆուտբոլը Հայաստանում տարածվել է 2014 թվականից. անցկացվել են մրցաշարեր, եւ ավելի շատ մարդիկ են սկսել զբաղվել այդ մարզաձեւով՝ հող նախապատրաստելով ֆեդերացիայի հիմնադրման համար, որը տեղի է ունեցել 2019 թվականին:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՄՐՑԱՆԱԿ

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ ՁԵՌՆԵՐԵՑԸ

Safe YOU-ի հիմնադիր եւ գործադիր տնօրեն Մարիամ Թորոսյանը Եվրոպայի լավագույն երեք ձեռնարկատերերից մեկն է, ով արժանացել է Cartier Women's Initiative մրցանակին: Մրցանակը շնորհվում եւ ֆինանսավորվում է տաղանդավոր, ազդեցիկ ձեռներեցների կողմից:

Մարիամ Թորոսյանն ընտրվել է գենդերային բռնության դեմ պայքարելու իր հանձնառության համար՝ կանխարգելման նպատակով արհեստական ??ինտելեկտի տեխնոլոգիաների կիրառմամբ նորարարության միջոցի, ինչպես նաեւ դատական հետապնդման եւ համակարգային փոփոխություններ ստեղծելու համար լրացուցիչ գործիքներ տրամադրելու համար:

Cartier Women's Initiative-ն իր 16-ամյա պատմության ընթացքում առաջին անգամ որպես ֆինալիստ Հայաստանից կին ձեռներեց է ընտրել: Սա կարեւոր իրադարձություն է Safe YOU-ի համար, որը հիմնադրվել է Մարիամ Թորոսյանի կողմից 2020 թվականին գենդերային բռնության դեմ պայքարելու եւ գենդերային հավասարությունը խթանելու համար: Նախաձեռնությունը նպատակ ունի հզորացնել կանանց՝ նրանց տրամադրելով անվճար անվտանգության սարքավորումներ եւ ռեսուրսներ վտանգավոր իրավիճակներում օգնություն փնտրելու համար, ինչպես նաեւ հեռահար իրավական եւ հոգեբանական աջակցություն: Ծրագիրը նաեւ աշխատում է ընտանեկան բռնության մասին իրազեկվածության բարձրացման եւ Հայաստանում գենդերային հավասարության խթանման ուղղությամբ:

Cartier Women's Initiativer-ը ուղղված է բիզնեսում ներգրավված կանանց աջակցելուն, որոնց գործունեությունը դրական ազդեցություն ունի հասարակության եւ շրջակա միջավայրի վրա: Դրա հիմնական նպատակն է ապահովել, որ յուրաքանչյուր կին ձեռներեց կարողանա օգտագործել իր ողջ ներուժը: Ծրագիրը ուղղված է տարբեր ոլորտների բիզնեսներին՝ ներառյալ առողջապահությունը, կրթությունը, շրջակա միջավայրը, տեխնոլոգիաները եւ սոցիալական ձեռներեցությունը: Տարիների ընթացքում ծրագիրն աջակցել է ամբողջ աշխարհից բիզնեսի լայն շրջանակներին:

«Ինձ համար պատիվ է այս տարի ընտրվել որպես CWI-ի 33 նոր անդամներից մեկը եւ միանալ մոտ 300 ազդեցիկ ձեռնարկատերերի համաշխարհային համայնքին, որոնք ամեն օր ազդում եւ փոխում են աշխարհը,-ասել է Մարիամ Թորոսյանը:- Լավագույն եռյակում լինելը մեր Safe YOU թիմի քրտնաջան աշխատանքի եւ նվիրվածության ճանաչման մասին է խոսում, ինչպես նաեւ այն ազդեցության, որ մեր նախաձեռնությունն ունի կանանց կյանքի վրա թե՛ Հայաստանում, թե՛ դրա սահմաններից դուրս»:

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԳԻՇԵՐԸ՝ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ մայիսի 20-ին՝ ժամը 18:00-ին, «Թանգարանների գիշեր» համաեվրոպական միջոցառման շրջանակում Հայաստանի պատմության թանգարանում տեղի կունենա մշտական ցուցադրության սրահների վերաբացում:

Վերաբացվելու են «Բրոնզի դար. իրականության եւ առասպելների միջով», «Երկաթի դար», «Աստվածների թագավորությունը. Ուրարտու/Բիայնիլի», «Ուժ եւ գեղեցկություն. Անտիկ Հայաստան» խորագիրը կրող ցուցասրահները: Բացմանը կհաջորդի համերգային ծրագիր:

Ցուցադրության շրջանակում կներկայացվեն Հայաստանի պատմության թանգարանի հնագիտական հավաքածուից եզակի եւ բարձրարժեք նմուշներ, այդ թվում՝ հայ հնագիտության ամենանշանակալի գտածոներից՝Ք.ա. 22-21-րդ դդ. Քարաշամբի ցեղապետի դամբարանից գտնված արծաթե դրվագազարդ գավաթը, Ք.ա. 15-14-րդ դդ. թվագրվող Լճաշենի պեղումներից գտնված քառանիվ սայլը, որը ծառայել է որպես դիակառք, Արգիշտի I արքայի սաղավարտը, Էրեբունի (Երեւան) քաղաքի հիմնադրման մասին Արգիշտի I արքայի արձանագրությունը, ռիտոններ, որոնք ծառայում էին պաշտամունքային բնույթի արարողությունների ժամանակ սրբազան հեղումներ կատարելիս, ինչպես նաեւ արձանիկներ, զենքեր, զարդեր, ծիսական անոթներ, կնիքներ, դրամներ՝ գտնված Էրեբունուց, Լճաշենից, Արթիկից, Լոռի Բերդից, Քարաշամբից եւ Հայաստանի այլ հուշարձաններից:

Ցուցադրության բացումից հետո՝ժամը 20:30-ին, տեղի կունենա «Մենք ենք, մեր բարբառները» խորագիրը կրող համերգային ծրագիր՝ «Ծովակ» ավանդական երգի-պարի խմբի կատարմամբ (գեղարվեստական ղեկավար՝ Գագիկ Գինոսյան): Ծրագրի ընթացքում խումբը հանդես կգա Հայաստանի տարբեր տարածաշրջաններին հատուկ երգ ու պարով:

● *Մայիսի 21-ին «Մեggn» ակումբում տեղի կունենա Another Story Band համերգային փառատոնը: Տոմսերի արժեքը՝4000 դրամ: Սկիզբը՝ժամը 21:00-ին:*

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ «Արտահանում» մաքսային ընթացակարգի կիրառման դեպքում ինչ մաքսային վճարներ են գանձվում: Եվ խնդրում եմ ասել, թե մաքսային ձեւակերպումներ իրականացնելիս օտարերկրյա քաղաքացին կարող է արդյոք հանդես գալ որպես հայտարարատու:

Նելլի Մխիթարյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 89-րդ հոդվածի համաձայն՝ՀՀ-ից արտահանվող ապրանքների համար մաքսատուրքի դրույքաչափը սահմանվում է 0 տոկոս, իսկ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ ՀՀ մաքսային սահմանից դուրս «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանվող ապրանքների հարկվող շրջանառության նկատմամբ սահմանված է ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափ: Մաքսավճարի դրույքաչափերին ծանոթանալու համար անհրաժեշտ է առաջնորդվել «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 97-րդ հոդվածով:

Հայտնում ենք նաեւ, որ անհրաժեշտ է առաջնորդվել «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 161-րդ հոդվածի սահմանված դրույթներով, համաձայն որոնց՝ որպես հայտարարատու կարող է հանդես գալ՝

1) Միության անձը, եթե նա՝

ա. կնքել է արտաքին տնտեսական գործունեության պայմանագիր, կամ նրա անունից (հանձնարարությամբ) կնքվել է արտաքին տնտեսական գործունեության պայմանագիր,

բ. ունի ապրանքների տիրապետման, տնօրինման, օգտագործման իրավունք՝ անկախ արտաքին տնտեսական գործունեության պայմանագրի առկայությունից,

2) անձնական օգտագործման ապրանքներ տեղափոխող օտարերկրյա ֆիզիկական անձը,

3) փոխադրողը կամ Միության անձ հանդիսացող առաքողը՝ տարանցման հայտարարագիր ներկայացնելու դեպքում:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նկատենք, որ մաքսատուրքի վճարման ժամկետների փոփոխությունը կատարվում է վճարման հետաձգման կամ տարաժամկետ վճարման ձեւով՝ Միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերով սահմանված հիմքերի եւ պայմանների առկայության դեպքում եւ կարգով:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ամուսնությունից հետո անձի ազգանվան փոփոխության դեպքում, եթե Կադաստրի պետական կոմիտեի կողմից նախկինում տրամադրված վկայականում գրված է մինչամուսնական ազգանունը, հնարավո՞ր է արդյոք փոխել ազգանունը նաեւ վկայականում:

Սոնա Ֆեռոյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ս. Ֆեռոյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ նման դեպքում ամուսնության գրանցման վկայականը՝ ազգանվան փոփոխության մասին համապատասխան նշումով, անշարժ գույքի գրանցման վկայականի հետ միասին կարող է ներկայացվել Հայաստանի Հանրապետության կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի սպասարկման գրասենյակ կամ օպերատորի մասնաճյուղ, որտեղ ներկայացված փաստաթղթերի հիման վրա վկայականում կկատարվի ազգանվան գրառման փոփոխություն (2012 թվականի հունվարի 1-ից հետո տրամադրված վկայականների դեպքում կտրամադրվի նոր վկայական): Ընդ որում՝ վկայականում փոփոխություն կատարելու կամ փոփոխված ազգանվամբ նոր վկայական ստանալու համար գանձվում է անվանափոխման գրառման վճար՝ 2000 դրամի չափով:

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած եւ նրանց համատեղ սեփականությունը հանդիսացող գույքի նկատմամբ գրանցվել է ամուսիններից միայն մեկի սեփականության իրավունքը այն հիմքով, որ իրավունքի գրանցման համար հիմք հանդիսացած իրավահաստատող փաստաթղթերում որպես իրավատեր նշված է եղել միայն ամուսիններից մեկը, ապա նման գրանցման գործողության ընթացքում, ամուսինների համատեղ դիմումի հիման վրա, այդ գույքի նկատմամբ կարող է գրանցվել ամուսինների համատեղ սեփականության իրավունքը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Երեւանի Նուբարաշենի քաղաքային աղբավայրում հրդեհ է բռնկվել: ArmLur.am-ի տեսախցիկը ֆիքսել է, թե ինչ է կատարվում աղբավայրում: Երեւանը ամբողջությամբ ծածկված է այդ հրդեհի ծխով, ու ողջ քաղաքով տարածված է ծխի տհաճ հոտը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011 Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 + 2 +13 + 19
Կոտայքի լեռներ	- 2 + 2 +12 + 19
Կոտայքի նախալեռներ	+ 5 + 7 +16 + 19
Գեղարքունիք	0 + 5 +16 + 19
Լոռի	+ 3 + 9 +18 + 22
Տավուշ	- 2 + 1 +14 + 18
Արագածոտնի լեռներ	+ 4 + 7 +16 + 20
Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 9 + 21 + 23

Արարատ	+ 6 + 8 + 21 + 23
Արմավիր	+ 6 + 8 + 21 + 23
Վայոց ձորի լեռներ	- 2 + 1 +14 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 8 + 21 + 23
Սյունիքի հովիտներ	+ 6 + 9 +16 + 19
Սյունիքի նախալեռներ	- 1 + 4 +13 + 16
Արցախ	+ 7 + 11 +16 + 20
Երեւան	+ 6 + 8 + 20 + 22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.5.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*